ԽԱՂԻ ՆՊԱՏԱԿԸ

Առաջինը գտնել համընկնող պատկերը և բարձրաձայնել այն: Համընկնող պատկերները նույնական են ձևով, գույնով, և միայն չափերը կարող են տարբեր լինել:

ԻՆՉՆ ԻՆՉՈՑ Է

57 պատկեր՝ հայկական շնչով,
57 քարտ՝ յուրաքանչյուրի վրա
8 տարբեր պատկեր:
Ցանկացած երկու քարտ ունեն միայն մեկ համընկնում:

Լավ խաղալու հիմնական նախապայմաններն են
ուշադրությունն ու արագությունը:

Հաղթում է այն մասնակիցը, որն ամենից արագ է գտնում և բարձրաձայնում համընկնող պատկերը: Եթե միաժամանակ մի քանիսն են բարձրաձայնում, ապա հաղթող է ճանաչվում նա, որն առաջինն է քարտը վերցնում: Եթե 2-ից ավելի մասնակից են, խաղում եք «պարտվողը դուրս է գալիս խաղից» սկզբունքով:

Կարելի է խաղալ տարբեր եղանակներով:

ՏԱՐԲԵՐԱԿ 1

Խաղի նպատակը

Անհրաժեշտ է որքան հնարավոր է շատ քարտ հավաքել:

Ինչպե՞ս բաժանել քարտերը

Մի լավ խառնեք քարտերը, մեկական քարտ՝ փակ վիճակում բաժանեք մասնակիցներին, իսկ մնացած քարտերը մեկ կույտով դրեք կենտրոնում՝ բաց վիճակում:

Կանոնները

Մասնակիցները բաց են իրենց քարտերը, և ամեն մեկը փորձում է առաջինը գտնել համընկնումը իր և կենտրոնում դրված կույտի ամենավերևի քարտում:
Առաջին խաղացողը, որը գտնում է և բարձրաձայնում, վերցնում է կույտի վերևի քարտը և բաց վիճակում դնում է իր քարտի վրա: Այդպես կենտրոնի կույտի հաջորդ քարտն է բացվում:
Մասնակիցներն անմիջապես պետք է փորձեն գտնել արդեն այդ քարտի և իրենց քարտի միջև համընկնումը:
Այդպես շարունակ, մինչև կենտրոնի կույտը վերջանա:

Խաղի ավարտը

Խաղն ավարտվում է, երբ կենտրոնի բոլոր քարտերը հայտնվում են մասնակիցների մոտ: Հաղթում է նա, ով ամենաշատ քարտն է վերցրել:

ՏԱՐԲԵՐԱԿ 2

Խաղի նպատակը

Անհրաժեշտ է որքան հնարավոր է շուտ ազատվել բոլոր քարտերից:

Ինչպե՞ս բաժանել քարտերը

Խառնե՛ք քարտերը և հավասար քանակով բաժանեք մասնակիցներին՝ փակ վիճակում, վերջին քարտը դրեք կենտրոնում՝ բաց վիճակում:

Կանոնները

Մասնակիցները շրջում են իրենց մոտ եղած քարտերի կույտը: Փնտրում են համընկնող պատկերը իրենց և կենտրոնի քարտի միջև: Ով առաջինն է գտնում և բարձրաձայնում, իր քարտը դնում է կենտրոնի քարտի վրա: Այժմ պետք է գտնել համընկնում կենտրոնում հայտնված նոր քարտի հետ և այդպես շարունակ:

Խաղի ավարտը

Պարտվում է նա, ով ամենավերջինն է ազատվում իր քարտերից:

ՏԱՐԲԵՐԱԿ 3

Խաղի նպատակը

Անհրաժեշտ է հնարավորինս քիչ քարտ հավաքել:

Ինչպե՞ս բաժանել քարտերը

Խառնե՛ք քարտերը, մասնակիցներին բաժանեք մեկական քարտ՝ փակ վիճակում: Մնացած քարտերն իրար վրա դրեք կենտրոնում՝ բաց վիճակում:

Կանոնները

Մասնակիցները բաց են իրենց քարտերը և սկսում փնտրել համընկնող պատկեր կենտրոնի քարտի և մյուս մասնակիցներից որևէ մեկի քարտի վրա: Գտնելուն պես բարձրաձայնում են, վերցնում կենտրոնի քարտը և դնում այն մասնակցի քարտի վրա, որտեղ տեսել են համընկնող պատկերը: Այդպես կենտրոնում նոր քարտ է բացվում: Խաղը շարունակվում է, մինչև կենտրոնի բոլոր քարտերը վերջանան:

Խաղի ավարտը

Հաղթում է նա, ով ամենաքիչ քարտերն է «նվեր» ստացել:

ՄԵՐ ԱՅԼ ԽԱՂԵՐԸ

Սպկկրպպ

Սեղանի թիմային ինքնելկրուալ խաղ. Էությունը՝ ամրոաժեշտ է մեկ րոպեում որքան հնարավոր է շատ բառ բպպարդել թիմակիցներին՝ այլ կերպ: Կարելի է օգտագործել հոմանիշներ, հականիշներ, հուշումներ և այլն:

ՀԻԼ ՀԱՄՈ

Սեղանի թիմային ինքնելելկրուալ ՋԻԼ խաղ: Ամրոաժեշտ է գլել զառը, մեկ րոպեում կատարել առաջադրանքը և միավորները հավաքել: Մասնակիցներին ընձեռվում է բպպարդրելու 5 բարեր միջոց. ինչ և ինչպես՝ որոշում է ՋԻԼ-ը:

ԱՅԼ ԿԵՐՊԻԿ

Սեղանի թիմային ինքնելելկրուալ խաղ երեխաների և պատանիների համար. Կուտը պարունակում է 200 երկկողմանի քարտ՝ նկարներով (4-8 կարեկանների համար) և բառերով (8-14 կարեկանների համար):

ԱՅԼ ԳՈՐԳ

40 կլոր՝ առանձնալվող կտորով: Հավաքված գորգի մակերեսը՝ 136x85 սմ: Հեշտությամբ փաթաթվում են՝ պտտելով գոներ, ուսկյողական և անկիրանց խաղագ որգ: Պարրսավված է EVA հումքով, որը չի պարունակում բիսֆենոլ և (BPA):

ՏՈՆՈՒՄ ԵՆ ԵՐԵԽԱՍԵՐԸ

Փակցրե՛ք, լուսանկարե՛ք, հուշագրե՛ք Հավաքածուն ներառում է 15 շրջանաձև պիտակ՝ հակակաս և միջազգային կոդերը մայրիկի և հայրիկի ծննդյան օրերը, երեխայի ատաձեռարիկն ու կարդարդը: Հեշտությամբ փակցվում են:

Գոբրիկի Առաջին Ամիսները

Փակցրե՛ք, լուսանկարե՛ք, հուշագրե՛ք Հավաքածուն ներառում է 12 շրջանաձև պիտակ՝ 1-ից 11 ամիսները և առաջին կարդարդը: Հեշտությամբ փակցվում են և պոկվում՝ առանց հագուստը վնասելու: Անվիրանց են և ջրակայուն:

www.aylkerp.am

ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Հեռախոս	Ծերուկ	Կրեխս	Գորգ	Շուրթեր	Նուռ	Տերև	Գնդակ	Նրար
Ծիրան	Կարաս	Լուսին	Ուղտ	Շուն	Թառ	Պայտ	Արեգակ	
Սիս ու Մասիս	Ձուկ	Շախմատի ձի	Հայաստանի քարտեզ	Բու	Սպորտային կոշիկ	Տուն	Երազ ավտոմոբիլնա	
Կայարանային	Օպերայի շենք	Մայր Հայաստան	Քարայծ	Գառնիի տաճար	Բեղեր	Հայկական քիթ	Վրձին	
Նարդի	Խաղող	Ռոբոտ	Կուժ	Գլխարկ	Անմոռուկ	Թիթեռ	Ֆոտոխցիկ	
Վանա կատու	Ժամացույց	Ինքնաթիռ	Մկրատ	Ծծակ	Լամպ	Նավակ	Ակնոց	
Զառ	Դրոշ	Կրակ	Իլիկ	Հեծանիվ	Օդապարիկ	Հայերեն տառեր	ԱՅԼԿԵՐՊ	

ՕԳՏԱԿԱՐ ԱՅԼ ՄԱՆՐՈՒՔՆԵՐ

×××

Նախքան խաղն սկսելը, ուսումնասիրե՛ք քարտերը և փորձեք գտնել մի քանի համընկնումներ, որպեսզի պատկերացնեք՝ ինչ եք փնտրելու քարտերի վրա ;)

×××

Ցուրաքանչյուր խաղիչ առաջ մի լավ խառնեք քարտերը, հետո բաժանեք:

×××

Կարող եք ընտրել խաղի տարբերակներից մեկը և խաղալ փոկերով՝ «պարտվողը դուրս է գալիս» սկզբունքով:

×××

Կարող եք նաև միավորել բոլոր երեք տարբերակները և մրցաշարի սկզբունքով խաղալ. խաղը սկսել առաջին տարբերակով, ավարտից հետո պարտվողը դուրս գա, իսկ մյուս մասնակիցները շարունակեն խաղալ երկրորդ տարբերակով, ավարտից հետո կրկին պարտվողը դուրս գա, իսկ մյուսները սկսեն խաղալ երրորդ տարբերակով: Հետո նորից վերադառնան առաջին տարբերակին, և այդպես, մինչև մնա 1 հաղթող մասնակից:

ԿԱՆՈՆՆԵՐԻ ԳՐՔՈՒՅԿ

ԳՏՆԵԼՈՒԿ

Մասնակիցների թիվը՝ 2-8

Տարիքը՝ 4+